XVIII

ՄԱՐՏԻՐՈՍ ԴԻ ԱՌԱՔԵԼԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVIII Դ.)

Ա.

Ստորև բերվող բնագիրը, որ գտնվում է Մատենադարանի № 1786 ձեռագրի 44բ—49բ էջերում, առաջին անգամ հրատարակեց պրոֆ. Աշ. Աբրահամյանը, 1941 թ., Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու»-ի I հատորում[1]։ Հենց այստեղ էլ հրատարակիչը, ենթադրաբար, սա վերագրել էր Մարտիրոս դի Առաքելին, թեև այդ բանի համար նա չուներ ուղղակի ցուցում։ Սակայն, կարծում ենք, պրոֆ. Աշ. Աբրահամյանը ճիշտ է վարվել, «որովհետև, ինչպես գրում է, նախ՝ ժամանակագրությունը պարունակող ձեռագրի գրիչը նա է (Մ. դի Առաքելը—Վ. Հ.) և ապա՝ ժամանակագրության վերջին թվականը համընկնում է ձեռագրի գրչության ժամանակի հետ։ Դժվարանում ենք կասկածել, որ Մարտիրոս դի Առաքելը, որը գրել է ամբողջ ձեռագիրը՝ օգտված լինի նույն տարում կազմած մի այլ հեղինակի ժամանակագրությունից»[2]։ Հավաստի համարելով այս ենթադրությունը, ժամանակագրությունը հրատարակում ենք երկրորդ անգամ Մարտիրոս դի Առաքելի անունով։

Սրա կենսագրությունից մեզ շատ քիչ բան է հասել։

Այդ սակավաթիվ փաստերը գտնվում են № 1786 ձեռագրի տարբեր էջերում, որը, ինչպես արդեն նշել ենք, Մարտիրոս դի Առաքելի ճանապարհորդական տետրը պետք է լինի[3]։

Ըստ այդ տեղեկությունների, 1709 թ. Մարտիրոսը եղել է Շիրազում, 1722-ին՝ Բենդեր Աբասում և Բենդեր Սուրաթում, 1723-ին՝ Լիվոռնոյում և այլն։

Ժամանակագրությունը սկսվում է մի փոքրիկ ներածականով, որտեղ խոսվում է Սեֆյան դինաստիայի հիմնադիր Իսմայիլ I-ի նախորդների մասին, ապա սկսվում է բուն ժամանակագրությունը՝ Սեֆյան թագավորների հաջորդական շարքը՝ Իսմայիլ I-ից մինչև Թահմազ II-ը։ Այս մասում բավական համառոտ նշված են յուրաքանչյուր թագավորի ժամանակ տեղի ունեցած նշանավոր եղելությունները։ Այդ տեղեկությունները, սկսած շահ Սեֆի I-ի շրջանից, դառնում են բավական մանրամասն և ուշագրավ։ Ժամանակագրությունն ավարտվում է 1729 թվին Թահմազ Ղուլի խանի,

---

[1] Երևան, 1941 թ., առաջաբանը՝ էջ 93—95, բնագիրը՝ էջ 95—100։

[2] Նույն տեղում, էջ 93։

[3] ՄԺ, 1, էջ 263։

ապագա Նադիր շահի կողմից մի շարք քաղաքներ նվաճելու վկայություններով։ Արժեքավոր և հետաքրքիր են ժամանակագրության երկրորդ մասի տեղեկությունները, սկսած XVII դարի 50-ական թվերից, որտեղ խոսվում է Ադրանստանում տեղի ունեցած գահակալական կռիվների, լեզգիների, ավղանների ասպատակությունների, Պյոտր I-ի դեպի Անդրկովկաս և Պարսկաստան կատարած արշավանքի, ինչպես նաև Օսմանյան Թուրքերի ասպատակությունների և պատերազմների մասին։

Ժամանակագրության սկզբի մասի համար հեղինակն օգտագործել է գրավոր առանձին աղբյուրներ, որոնց միջև նկատելի եղած տարբերությունները նա նշում է «այլ կասեն թէ» կամ «ասեն թէ» միջանկյալ բառերով։

Սկսած 1721 թվականից հեղինակը մերթ ընդ մերթ ակնարկում է դեպքերին իր ժամանակակից լինելը «արդ այժմ, յորժամ է» կամ «որ է այժմ այսպէս» բառերով։ Այսպիսով, ժամանակագրության հիմնական և արժեքավոր մասը կազմում են հեղինակին ժամանակակից դեպքերի տեղեկությունները։

Ժամանակագրությունը ձեռագրում ընդհանուր վերնագիր չունի։ Մի քանի փոքր վերնագրերի ներքո շարադրված է կոնկրետ նյութը։ Այդ վերնագրերը գրված են ձեռագրի ժամանակագրությունն ընդգրկող բոլոր էջերի վերին լուսանցքներում. դրանք են՝

ա) Կարգ և թիվ թագաւորաց Պարսից։

բ) Առուն թագաւորութեան Պարսից ի Ցաղվանէն։

գ) Առուն աշխարհաց Պարսից՝ Օսմանցոց և Ռուսաց։

դ) Առուն աշխարհաց Պարսից՝ Օսմանցոց։

ե) Մարտ Օսմանցոց ընդ Աղվանս և ընդ Պարսից։

զ) Մարտ Պարսից ընդ Օսմանցիս։

Նպատակահարմար գտանք այս վերնագրերը տեղափոխել յուրաքանչյուրը համապատասխան նյութի շարադրման սկզբում, այդ մասին հիշելով ծանոթագրություններում։

Ինչպես նշեցինք, ժամանակագրությունն ավարտվում է 1729 թվականով, նշանակում է, հեղինակն այն կազմել է 1729 թվից հետո, հավանաբար 1729—30 թվերին։ Բնագիրը հրատարակում ենք նույնությամբ՝ ուղղելով միայն կետադրությունը։

Կարգ և թիւ թագաւորաց Պարսից[1]. Ի Թուարերութեանս Հայոց ՊՂԶ (1397) յորժամ Լանկ Թամուրն յել երկրէ իւրմէ[2] և եկն երկիրս Ատրպատականի, զՎան, զԵրևան և զՆախչուան աւերեաց. էր տէր Արտաւիլոյ շեխ ոմն, անուն Սէֆի։ Սորայ որդի լեալ շեխ Հայդար անուն, որ առեալ է իւր կնութիւն զքոյր Ցեազուբ թագաւորին, որ էր տէր Թաւրիզոյ։ Եւ էր սայ, այս Ցեազուբս թոռն Ջհանշահ թագաւորին[3]։ Եւ այս շեխ Հայդարէս և Ցեազուբ թագաւորի քւերէն ծնանի որդի և անուանի Իսմայէլ։ Այս շեխ Հայդ[ա]րս և կինն իւր խորհին դեղով սպանանել զՑեազուրս թագաւորն, զի ինքեանք առցեն զթագաւորութիւնն։ Եւ սիրոյ պատճառօք կոչեն զՑեազուր թագաւորն ի ճաշ և տան ուտել նմայ զդեզեալ կերակուրն։ Եւ յետ զգալոյն թէ դեղեալ է կերակուրն և տայ նոցա ևս բռնութեամբ ուտել. և մեռան երեքեանս՝ Ցեազուր թագաւորն, շեխ Հէյդարն և կին նորայ[4]։ Եւ մանուկն Իսմայէլ փախստական տարան յԱխթամար կղզի և անդ սընանի[5]։ Եւ յորժամ հասանէ յարբունս հասակի բերեն զնա ազգականքն իւր և ասեն, թէ սայ է ժառանգն երկոցունց կողմանցն, քանզի սայ է ժառանգն[6]։

1. Շահ Իսմայէլս նստի թագաւոր Թարվէզ ի թուին Հայոց ՋԾ (1501), գնաց յԱսպահան պատերազմեցաւ ընդ Ալվանդին և փախոյց զնայ և ինքն էառ զթախտն և նստաւ[7]։ Եւ ի թվին ՋՀԵ (1526) մեռաւ, որ թագաւորեալ ամս ԻԵ (25)[8]։

2. Շահ Թահմազ, որդի շահ Իսմայիլին նստաւ թախտ թվին ՋՀԵ (1526)։ Եւ թվին ՋՂՕ[9] (1541) գնաց էառ Երևան, Գանջայ, Շամախի, գնաց ևս ի Վրաց տուն և բազում աւերութիւն արար։

Դարձեալ ի սոյն թվին թագաւորն Հընդկաց Հումայուն նեղացեալ ի թշնամեաց եկն առ շահն[10] և առեալ ի սմանէ զօրս իբրև ԻՌ (20.000) և տարեալ յաշխարհն իւր, պատերազմեցաւ, և կոտորեաց զթշնամիսն իւր, և փախոյց, և զերկիրն իւր գրաւեաց, և այլ բազում քաջութիւնս արար շահ Թահմազս, որ գնաց մինչ ի Վան, Եղնկան և զԱրզրում աւերութիւն դարձոյց։ Մեռաւ թվին ՌՕԻԲ (1573)[11], թագաւորեալ սորայ ամս ԽԸ (48) և այլք ասեն թէ՝ ԾԱ (51)։

3. Շահ Իսմայէլ նստաւ թախտ թվին ՌՕԻԳ (1574), որ թագաւորեալ սորայ ամս Բ (2) և մեռաւ ի թվին ՌԻԳ (1575)-ին, եւ (1. դարձեալ ի սոյն թվիս, ասեն թէ, եղբայր սորայ Թահմազ

անուն, թախտ նստուցին և յետոյ ի մէջ բաղանեացն խեղդեցին այս շահ Թամազիս, 2. և յետ սորայ, եղբայր սորայ, սուլթան Հայդարն սպանին և ապայ գնացեալ մեծամեծքն, 3. զպստիկ շահ Իսմայէլն բերդէն դուրս բերին թախտ նստուցին, որ և յետոյ
5 սպանին, և սայ ես էր եղբայր սոցայ, 4. Ամիր Համզայ միրզէն ևս, եղբայր սոցայ, սպանին, որ այս ամենայն եղև ներ երկու. ամում)[13]։

4. Շահ Խուդայբանդայ, որ էր որդի շահ Թահմազին և եղբայր շահ Իսմայէլին այլև եղբայր այս չորեցունցս, նստաւ թախտ
10 թվին ՌԻԷ (1578)։ Եւ էր սայ շեխ, և պակասեալ ի լուսոյ, որ էր կարգեալ ի հօրէն իշխան յերկրին Խորասանայ[13]։ Այլ էր սայ յոյժ անարի վատթար ի գործս թագաւորութեան. ի սորայ ժամանակս առին Օսմանցիք զԹաւրիզ, զԵրևան, Գանջայ, Շամախի[14]։ Եւ այլք ասեն, թէ վերոյ ասացեալ Ամիր Համզէն սորա որդի
15 էր, որ սպանին Կարմրագլուխքն տիրատեաց, այսինքն Ղզլբաշքն, որ իսկոյն խախծեալ սրտիւ եկեալ առ միւս որդին իւր Աբազն, որ կարգեալ էր զնայ իշխան երկրին Խորասանայ և կացեալ ամս ինչ մեռաւ, թագաւորեալ ամս Գ (3) անարիս այս։

5. Շահ Աբազ, որդի շահ Խուդաբանդային, թախտ նստաւ
20 ի Մաշադ, թվին ՌԻԹ (1580)[15]։ Սայ յոյժ խոհեմ ի գործս թագաւորութեան և յաղթող ի պատերազմի։ Էառ ի ձեռաց Օսմանցոց զԹաւրիզ, զԵրևան, զԳանջայ, Շամախի և հասեալ մինչև ի Վան || և զԲասեն աւերեաց։ Եւ անտի զամենայն ազգս Հայոց 45,։
քշեաց, սկսեալ անտի մինչ Երևան։ Եւ անտի բերեալ ափն Երասխ
25 գետոյն, որ էր թիվ ՌՃԴ (1605) մուտ տարոյն[16]։ Ընդ նմին և գիւղաքաղաքն Ջուղայ քշեաց և տարաւ յԱսպահան բնակեցոյց և ի գաւառս նորայ սփոեաց։ Այս է մէջ սուրգունն. որ և յետ Բ (2) ամի եղև սով սաստիկ, մինչ Գ (3) ամ, այնպէս որ մարդիք զմեռեալս և զկենդանիս սպանանեալ ուտէին, որ է սարսռելի
30 ի լսելն[17]։

Եւ թվին ՌԿԲ (1613) գնաց ի Վրաց տուն և զբաղումս գերեցոյց և բերեալ ի Պարսկաստան բնակեցոյց։

Եւ թվին ՌՀԱ (1622) գնաց ի Ղանդահար և էառ պատերազմաւ զբերդն, և զՀարաթ[18] էառ ևս։

35 Ի սոյն թվին գնաց Իմամզուլի խանն էառ զՀուրմուզ[19]։ Եւ այլ բազում արիութիւն արարեալ, բայց յոյժ նեղեաց զազգս Հայոց և երկիրս Հայոց ցիր և ցան արար և անբնակ արար Հայաս տուն և ոչընչացոյց զերկիրն. որ մեռաւ ի թվին ՌՀԸ (1629), որ թագաւորեալ ամս ԽԹ (49)։

40 [6]. Շահ Սէֆի, թոռն շահ Աբազին նստաւ թախտ թվին ՌՀԸ (1629)։ Ի սորայ աւուրս և ի սոյն թվին Մօլսէս կաթողիկոս նստաւ յաթոռ Էջմիածին և գնաց առ շահն և ողորմիւ թուման մուղադայն Էջմիածնայ վերացոյց. որ ետ Գ (3) ամաց տէր Փիլիպոս կաթողիկոս նստաւ և գնաց առ շահն խնդրեաց
45 յաջն սուրբ Լուսաւորչին և երեր Էջմիածին։

Եւ սուլթան Մուրադն թվին ՌՕԶԷ (1638) գնաց Բաղդաս

էառ. և զԵրևան ետուն շահին. և այնմհետէ եղև հաշտութիւն ի մէջ երկոցունցս[20]։ Մեռաւ թվին ՌՂԱ (1642), թագաւորեալ ամս ԺԳ (13)։

[7]. Շահ Արաղ Երկրորդ, որդի շահ Սէֆուն, նըստաւ թվին
5 ՌՕՂԱ (1642) մայիսի ԻԶ (26)։ Սայ ասի թէ քրիստոնեայսէր էր։ Եւ ի տիս մանկութեան նստաւ[21], Եւ ասեն թէ էր յոյժ ուղղադատ։

Եւ ի թվին ՌՂԷ (1648) գնաց ի Ղանդահար և էառ զնայ պատերազմաւ ի ձեռաց Հընդկաց։ Եւ կոտորեաց զամենայն զո- 46 ա
10 րականսն, որ ի բերդին էին։

Եւ ի թվին ՌՃԱ (1652) Շահիջհան թագաւորն[22] Հընդկաց առաքեաց որդի իւր, շահզատայ Օվրանգզիրն[23] էՃՌ (700.000) մարգով և Սագուլա խանն սարդար կարգեաց ի վերայ Ղանդահարայ, որք եկեալք ասպատակեցին զբերդն և Բ (2) կէս ամիս
15 նստան, ԻՌ (20.000) մարդ սպահի ջարթվեցան, թող զօրդիբազարի մարդն և բեռնակիրսն, ապայ յետ դարձան գն[ա]ցին։

Եւ դարձեալ ի թվին ՌՃԲ (1653) միւս անգամ Շահիջհանն առաքեաց մեծ զորդին իւր Գարաշուքուրն այլ ևս էՃՌ (700.000) մարգով, որք եկեալք Գ (3) ամիս նստան շուրջ զՂանդահարօքն,
20 ԼՌ (30000) մարդ ջարգեցաւ սպահի, թող զօրդիբազարի և բեռնակիր և զայլ ծառայս և ոչ կարացին առնուլ դարձան յետս յերկիրն իւրեանց ի Հընդստան։

Եւ այլ բազում արիութիւնս ցուցեալ այս երկրորդ շահ Արաղս մեռաւ ի թվին ՌՃԺԵ (1666) թագաւորեալ ամս ԻԴ (24)։

25 8. Շահ Սուլէյման, որդի շահ Արաղ Երկրորդին. յառաջ քան զայս, ասեն՝ թէ յետ մեռնելոյն շահ Արաղ Երկրորդին ասեն, թէ էր եղբայր այս Սուլէյմանիս, Սէֆի անուամբ, Գ (3) ամիս թագաւորեաց, բայց երկբայութիւն երևի զճշմարիտն ոչ երևի, այլ սայ ասեն, թէ յառաջն անունն Սէֆի էր, որ միշտ հիւանդանայր,
30 վասն այս պատճառի անունն փոխեալ Սուլէյման։ Բայց այլք ասեն, թէ յառաջին անուն Իսմայէլ էր և յետոյ Սուլէյման փոխեցին։ Արդ՝ եթէ այսպէս և եթէ այնպէս, այս Սուլէյմանս թագաւորեաց յետ հօրն իւրոյ երկրորդ շահ Արաղի և թախտ նստաւ ի թվին ՌՃԺԵ (1666)։

35 Ի սորա աւուրս խաղաղութիւն էր Պարսս, որ ոչ գոյր պատերազմ՝ ոչ ի Օսմանցոց կողմանէ և ոչ այլ կուսէ, այլ խաղաղութեամբ կայր[24]. մեռաւ ի թվին ՌՃԽԳ (1694)-ին, որ թագաւորեալ ամս ԻԸ (28)։

9. Շահ սուլթան Հուսէյն, որդի շահ Սուլէյմանին, նըստաւ 46բ
40 թախտ թվին ՌՃԽԳ (1694) յուլիս ԻԷ (27), յաւուր ուրբաթի և Աղարիայի թվին ՀԹ (79) զամար Թ (9) ի Ցասպահան[25]։ Ի սորա աւուրս բազում պատերազմունք ի Խորասան. մինչ զի ազգքն, որ կոչին Բլուջ և Աղվան եկեալք աւերէին ի քաղաքն Քրման և Քաշան և այլ բազում տեղիս, որ աւար առնելով մինչ ի Իսպա-
45 հան ես գային[26]։ Մինչ ի որ անճար մնացեալ կոչեն թագաւորն Վրաց, որոյ անունն էր Գօրգին խան, որ սայ գնաց Քրման ի

թվին ՌՃԽԵ (1696) և պատերազմեցաւ ընդ Բլօջին։ Եւ կոտորեաց ի սուր սուրսերի զամենեսեան և զմնացեալսն փախստականս արար և նստաւ անդ մինչև ցԸ (8) ամ։ Եւ յետ այնորիկ առաքեցին զնայ ի Ղանգահար և բազում արիութիւն և քաջութիւն արարեալ անխնահ կոտորէր զամենայն Բլօջս և զԱղվանս։ Եւ կեցեալ անդ ամս Դ (4)։ Եւ յետոյ զոմն Միր-Վէյիկ անուամբ, ազգաւ Աղվան, որ էր յիւզաշի յառէջ և յետոյ սուլթան եղև ի կողմանէ Պարսից, սայ յարուցեալ ի միում գիշերի դաղտ իւրով մարակականօք արամ[բ]ք, որ մերձ Գօրգին խանին ընտկեալ էր չորս հազար արամբք, իբր բարեկամ և ցաւակից, ցուցանէր կինքն։ Թվին Հայոց Ռ[Ճ]ԿԸ (1719) ապրիլ ամսոյ[31] ի մէջ գիշերի, գաղտ էսպան զԳօրգին խանն և բերդն Ղանդահարայ էառ զինքն և գրաւեաց, քանզի զօրքն Գօրգին խանին ելեալք էին և պատերազմէին ընդ Բլօջին և ոչ էին անդ Ղանդահար։ Եւ յետ սորայ Բ (2) անգամ Պարսիք զօրք առաքեցին ի Ղանդահար, այլ ամենեքեան կոտորեալք յետս դարձան։ Եւ յետոյ եկեալք այլ ազգ Աղուանքն[28] առին զքաղաքն Հէրաթ և աւարի հարին զամենայն երկիրն Խօրասանայ, որոյ նեղեալ թագաւորն Պա[ր]սից գնաց ի քաղաքն Ղազբին և Թէհրան նստաւ մինչ ի Դ (3) ամ թերևս խորհիլ մարթասցի ինչ վասն Հէրաթայ կամ Ղանդահարայ և ոչ կարաց։ Որ յետ Դ (3) ամաց դարձաւ ի Ցասպահան թվին ՌՃԼՕ (1721) մայիսի Ա (1), թվին Ազարիայի ՃԶ (106) շրաթ Բ (2) եկն յԱսպահան[29] և նոսեալ վարանեալ խորհիի և ոչ ձեռնահաս լինի || իրողութեանս։ 47—

Ի սոյն թվիս ՌՃԼՕ (1721) յորժամ շահն էր Թէհրան, քաղաքի ընակեալ զօրօքն, սորա էհթիմադովլէն, որ է վազիրն, որ էր անունն Ֆաթայալի խան, ազգաւ Լազգի, Շամխալի տոհմէ, ապստամբեալ գաղտնի խորհէր սպանանել զշահն. որմէ իմացեալ շահին զնենգութիւնն նորա իսկոյն Բ (2) աչացն խաւարեցոյց և զամենայն ինչս նորա և զտունն գրաւեաց[30]։ Եւ արդ այժմ, յորժամ է թվականս մեր ՌՃԼՕ (1721) ապրիլ ԺԵ (15) և թվին Ազարիայի ՃԶ (106) շամս ԻԶ (26)։ օրս շաբաթ, որ է Նոր կիրակէի շաբաթ աւրն[31], շարժ եղև Թաւրիզ մինչ ի ԼՕ (30) ժամ այնպէս ահագին երերեալ և տատանեալ մինչ ի ՃԽՌ (140.000) մարդ մեռեալ և բազում տեղ երկիր պատառեալ և բազում տունս մարդկամբք փլեալ, որ է սարսռելի յիշելն։

Դարձեալ ի սոյն թվին և օգոստոսի ամսոյն Կովկաս լեռնային ընակեալ Լազգիքն եկեալք առին զքաղաքն Շամախի և ամենայն Պարսիկքն սուր սուրսերի մաշեցին և ամենայն մերձակայ գաւառս՝ եթէ Շաքի, Շրվան և Ղարալայ աւարի առեալ, քանդեալ քայքայեցին, որ է այժմ այսպէս։

Առումն թագաւորութեան Պարսից ի Յաղվանէն[32]. Ի սոյն թվի 1170 (1721) և[33] որդի նոյն Աղվան Միր-Վէյիզին, որոյ անունն էր Միր-Մահմուդ, որ գրաւեալ նստէր Ղանդահար, եկն բազում զօրօք երկիրն Քրմանայ և էառ զքաղաքն պատերազմաւ։ Եւ նստաւ անդ աւուրս ԽՕ (40) և աւարի առեալ զքաղաքն ամենայն

բնակչօք իւրով և գեղօրէիւք սուր սուսերի մաշեաց և զՄնացեալսն աւար արարեալ, գերեալ զամենայն ուստերս և դստերս խազաց-ցոյց տարաւ երկիրն Ղանդահարայ անդ բնակեցոյց զամենայն գերեալսն։

5 Իսկ ի յետակայ ամին, որ էր թիվս Հայոց ՌՃՀԱ (1722) յունվար ամսոյ ել աստուածասաստ բարկութիւնն ի վերայ Պարսից, որ սքանչելարար պատուհասեցան ամենայն բնակիչք Պարսկաստանայ հանդերձ այն թագաւորաւն իւրեանց. քանզի ել ի Ղանդահարայ Միր-Մահմուդն այն, որ էր որդի այն Միր-Վէյի-

10 զին, ԺԲՌ (12000) Աղվան հեծելօք եկն ի վերայ ի Սպահանայ։ Եւ մինչդեռ եհաս մերձ ի Սպահանայ, Դուլնաբաթ կոչեցեալ տեղին, որ է Բ (2) կամ Գ (3) ասպարէզ, այսինքն աղաջ, մինչ ի Սպահան, ելին ի Սպահանայ զօրքն Պարսից շահ սուլթան Հուսէյնին իբր ՀՌ (70000) արամբք հեծելովք և ճակատեցան մինչ

15 ի կէս ժամս որ և յաղթեալ Միր-Մահմուդն զօրացն Պարսից, անխնահ կոտորեաց և Մնացեալ զօրքն Պարսից փախեան քաղաքն ի Սպահան։ Եւ յետ երկու աւուրց եկեալ Միր-Մահմուդն ԺԲՌ (12000) Աղվան զօրօքն իւրովք մերձ ի Ջուղայ || Բաղի Ֆահրա- 47բ

20 բադ կոչեցեալ այգին և անդ նստաւ, և պատեալ պաշարեաց զքաղաքն։ Իսկ Հայք, որք կային ի Ջուղայ, կէսն փախեան յԱսպահան և կէսն Մնաց անդ Ջուղայ. որ և եկեալ Աղվանքն Ջուղայ չարչարելով և հարկանելով օր ըստ օրէ առին զամենայն ինչս և ըստացուածս Հայոց. որ և գերեցին բազում աղջկունս Հայոց անդ։ Յորժամ եկն Միր-Մահմուդ և պաշարեաց զքաղաքն էր

25 թիվս ՌՃՀԱ (1722) մարտ Ա (1). և նստաւ ամիսս Է (7)։ Եւ եղև սով մեծ քաղաքին, որ ի վճարել կերակրոց կերին ձի, էշ և այլ այսպիսիս անսուրբ կենդանեաց, որ և յիշելն և գրելն է բան սարսռելի, քանզի կերան և դիակունս մեռելոց մինչ զի ասի, թէ բազում մայրք զորդիս իւրեանց սպանին և կերան ի սովու։

30 Իսկ յետ Է (7) ամսոց անճարակ եղեալ շահն սուլթան Հուսէյն ել ի պալատէն իւրմէ Գ (3) ձիաւորօք և գնաց առ ոտս Միր-Մահմուդին և ասաց. «Որովհետև Աստուծոյ կամքն այսպէս է, եկ նիստ ի թախտ, եթէ կամիս կառաւարել դուք։ Եւ եդ ի գլուխն Մահմուդին զջղայն իւր։ Եւ միւս աւուրն ել անտի Միր-Մահ-

35 մուդն և եկեալ եմուտ ի Սպահան քաղաք։ Գնաց ի պալատն արքունի և նստաւ թախտ. և շահ սուլթան Հուսէյնն եդ ի կալանս։ Եւ յետ Գ (3) ամսոյ կոտորեալ զամենայն շահզադէքն և զամենայն նախարարս Պարսից և բազումս ի մեծամեծաց և մօլայից, մինչ որ ասի, թէ ի սովոյ, որ բազումք և թէ ի որոյ վեց ՃՌ

40 (600000) անձինք մեռան ի Սպահան։ Իսկ յորժամ պաշարեալ էր քաղ[ա]քն Բսպտհան Միր-Մահմուդն, որդի շահիս, որ էր Թահմազ շահզադէն, փախստեամբ գնաց Ղազմին նստաւ անդ քանի ամիսս, որ և հասին զօրքն Աղվանից, և անտի ևս փախըստեամբ եհաս ի Թաւրէզ[34], Եւ ա[ռ]քաւ ետ անուանեալ թագաւո-

45 բութեանն իւրոյ Մահմուդն. և էառ շուրջանակի քաղաքսն մինչ ի Քաշան և Շիրազ. և եղև թագաւոր անուա[մ[քն, հոկ-

տեմբեր ԺԲ (12) թվին ՌՃՀԱ (1722), յորժամ էառ Իսպահան քաղաքն և նստաւ[35],

Առումն աշխարհաց Պարսից՝ Օսմանցոց և Ռուսաց[36]. Ի սոյն ամի ելին Օսմանցիք ըղձում պատրաստութեամբ ամենայն կողմամբ Պարսիկ երկրաւ[37]; Բայց յայսմ ամի Ռուսն եկեալ զօրք և էառ երկիրն Լազղու, զԹարխու և Անդրիու բերդն։ Եւ անտի մեծ կոտորումն եղև երկուց կողմանցն։ Եւ անտի եկեալ զօրքն Ռուսաց ի վերայ բերդին Դարբանդու, այսինքն Դուռն արկաթի, որում կային Պարսիկք, և կամաւ ետուն զբերդն և զքաղաքն։ Այլ և առին զԲաքու և մերձակա գաւառս[38]։ || Եւ ի սոյն ամի եկեալ զօրքն Ռուսաց և խաղաղութեամբ մտին երկիրն Գիլանայ, զՌաշտ, Լահիջան[39], Գասկար[40]. և այլ ամենայն քաղաքս Գիլանայ՝ զի ի Նիազովու[41] մինչ ի Աստարաբադ և այլ քաղաքս Մազանդարանու և ամենայն մերձակայ քաղաքս Կասբից ծովու կամաւ ետուն։ Եւ մտին Ռուսքն ե նստան, և տիրեցին խաղաղութեամբ։ Իսկ հետևեալ ամին, որ էր թիվ ՌՃՀԲ (1723), Վախտանգն, որ էր եղբօր որդի Գօրգին խանին անցելումդ յիշեցեալն և տէրն Թիֆլիզոյ և Վրաց աշխարհին, պատրաստութիւն առնէր զօրաց պահպանութիւն երկրին իւրոյ, վասն զօրացն Օսմանցոց, որք բանակեալ էին ի Ղարս։ Ի սոյն աւուրս Մահմադղուլի խան ոմն, որ էր բիձ որդի Թամբազ խանի, թոռն Հէբակլին Կախէթոյ՝ Վրաց տեառն, սայ ի կողմանէ շահզադայ Թահմազին, եկ զօրք Երևանայ և շրջակայիկայ քաղաքացն, այլ և նոյն Կախէթու Վրացոքն ի վերայ Վախտանգին պատերազմէր։ Եւ յոչ[42] գտանել յաջողութիւնս եկ և գնաց առ լեռնաբնակ Լազգիսն և ետ նոցա բազում ոսկիս. առեալ ընդ իւր զօրս նոցա և յանկարծօրէն եհաս բա-ն[ա]կն Վախտանգին և փախուստական արար. և եմուտ ի քաղաքն Թիֆլիզ աւար առնելով, ետ զամենայն ինչս նոցա Լազգեացն և տիրեալ նստաւ։ Իսկոյն լուեալ զօրացն Օսմանցոց, որ ի Ղարս նստէին, Ե (5) փաշայ եկեալ դեպի Թիֆլիզ։ Եւ Մահմադղուլի խանն առեալ զբալանիսն բերդին եկ ընդառաջ, ետ Օսմանցոց։ Եւ եկեալ Օսմանցոցն նըստան ի բերդին և տիրեցին զքաղաքն։

Ի սոյն թվին եկ Հասան փաշայն Բաղդադու զօրօք բազմօք և գնաց էառ Քրմանշահ, որ և անդ վաղճանեցաւ մահուամբ։

Ի[կ] հետևեալ ամին, որ էր թիվ ՌՃՀԳ (1724), որդի Հասան փաշայիս, Ահմէդ փաշայ սարասքէր, այլ Ե (5) փաշայօք եկ և գնաց բազում զօրօք ի վերայ Համադանու և պաշարեաց զքա-ղ[ա]քն իբրև ամիս. քանզի ժողովեալ էին ի մէջ քաղաքին իբրև Ռ (1000) գիւղից և գաւառաց անհամար անձինս։ Եւ սաստիկ պատերազմաւ էառ զքաղաքն յամսեանն օգոստոսի, և սրոյ ճարակ տուեալ անձինս իբրև երեք ՃՌ (100000) և գերեցան ամենայն գաւառքն տղայս և աղջկունս և կանայս իբրև երկու ՃՌ (100000). առին և ամենայն շուրջանակի քաղաքս ամենայն գաւառք մինչ ի Հաւիզայ[43] և միւս կողմն մինչ ի Զանգան[44] և Սուլթանիայ[45] և մինչ ի մերձ Իսպահան իբրև Գ (4) աւուր ճանապարհ։ Բայց աւաղ աղէտալի գրչիս և արեան արտասուայ-

խառն մելանիս, քանզի որ Համադան բնակեալք էին երեք հարիւր տուն Հայք, թոդ ղեղորէից շուրջանակի, այնպէս կոտորեցան և դերեցան մին[չ] զի հազիւ թէ Լ (30) տուն դտանի այժմ, որ երեք Ճ (100) անձինք ի մէջ եկեղեցոյն էին կոտորեալ։

5 Առումն աշխարհաց Պարսից Օսմանցոց[46]. Արդ ի սոյն թվին ես զօրքն Օսմանցոց եկին ի վերայ Երևանայ և պատերազմեցան յոյժ սաստիկ, ապայ կամաւ ետուն զբերդն[47]։ Եւ մինչդեռ գային զօրքն Պարսից ի վերայ Երևանայ, մտին զօրքն Օսմանցոց ի շրջակա գաւառս նորա և ողորմելի ազգս Հայոց բազումս կոտո-
10 րելով գերեցին բազում անձինս յոյժ։ Առին և Նախչվան ամենայն Գողթնաս տամբ և Զօրս[48], Մարաղայ մինչ ի Գանջայ ամենայն գաւառօք։ Եւ անճարակ ազգս Հայոց մեծաց, եթէ ի Շամախու և Շրվանայ երկիրն, եթէ Գանջայ և գաւառսն մինչ ի Թիֆլիզ և Երևանայ մինչ ի Արգաւէլ և Թարվէզ և Զօրս, Մարա-
15 ղայ, որ եթէ ի Լաղդեացն, եթէ ապստամբ և թէ այս Օսմանցոց այնպէս տապալեցան մինչ զի մեծ մասն Հայոց սրոյ ճարակ եղեն և դերեցան, որպէս այժմ տեսանեմք։

Ի սոյն թվին Արգուլայ փաշայն, որ նստէր ի Վան, ել սարասքէր է (7) փաշայիւք ի վերայ Թաւրիզոյ, էառ զամենայն
20 գաւառսն և զքաղաքն ոչ կարաց առնուլ, ձմերեաց անդ։ Եւ ի հետակայ ամին, որ էր թիվ ՌՃՀԴ (1725) յուլիս ամսին պատեր[ա]զմեցաւ և բազում մարտիւ էառ զքաղաքն Թարվէզ[49]։ Եւ զոր ինչ հանդիպեցաւ Համադանայ, այսպէս և Թարվիզոյ, ևս և ողորմելի և տառապեալ ազգիս Հայոց, որք անդ բնակէին։ Եւ
25 այսպէս աստուածասաստ բարկութիւնն ել ի վերայ ազգին Պարսից և պատուհասեաց այրելով ընդ նմայ և զազգս Հայոց։

Ի սոյն թվին և մայիս ամսին առին Օսմանցիքն զԳանջայ և ի սոյն թվիս առին և զԱրգաւէլ ամենայն գաւառօքն։

Մարտ Օսմանցոց ընդ Աղվանս և ընդ Պարսից[50]. ‖ Ի սոյն 49ա.
30 թվիս Միր-Մահմուդն, որ ի Սպահան ի խելացն ցնդեալ այսայհարութեամբ մեռանի, և հօրեղբօր որդի նորա՝ Աշրաֆ սուլթան, ապրիլ Գ (3) նստաւ ի տեղի Մահմուդին ի Սպահան թախտ և յետ Սքայ անունն իւր։

Եւ ի թվի ՌՁԻԶ (1726) սեպտեմբեր ամսին [և] Հայոց
35 ՌՃՀԵ[51], վերոյ Ահմադ փաշայն Բաղդադայ ել սարէսքէր Ը (8) փաշայիւք, իբր ՃՌ (10000) մարդօք ի վերայ Աշրաֆ սուլթանին։ Եւ հասեալ մինչ ի Ասպահանայ մերձ Գուլփէյքան պատերազմեցաւ ընդ Աղվանաց. և պարտեաւ, որ և կոտորեցան Օսմանցիք իբր ԽՌ (40000) և Ֆ[ա]ցեալքն ցիր և ցան փախստա-
40 կան դարձան, ընդ որս և Ահմադ փաշայն փոքր արամբք փախստական դարձաւ ամօթալի ի Բազդադ։ Եւ Աշրաֆ սուլթանն բազում քաջութեամբ և աւարօք Օսմանցոց դարձաւ ի Սպահան։

Դարձեալ ի յետակա ամին, որ էր թիվ Փրկչին ՌՁԻԷ (1727) և Հայոց ՌՃՀԶ, մայիս ամսոյն, ել հրաման թագաւորէն Օսման-
45 ցոց ի վերայ Ահմադ փաշային՝ ելանել մարտ ի վերայ Աղվանին. որ և եկեալ բազում փաշայիւք և իբր ԲՃՌ (200000) արամբք

մերձ ի Սպահանայ, իբրև է (7) աւուր ճանապարհ բանակեցաւ[52]։ Եկ և Աշրաֆ սուլթանն ի Սպահանայ զօրօք իւրօք և բանակեցաւ մերձ Օսմանցոց, իբրև աւուր միոյ ճանապարհ։ Եւ բազում պատդամաբերք ելևեկութեամբ արարին հաշտութիւն ընդ միմեանս.
5 դարձան Օսմանցիք ի Բազդադ և Ազուանքն ի Սպահան։

Իսկ ի թվին 1729 և Հայոց ՌՃՀԸ Թուրքմանոցն Պարսիկ, անուն Նազար խան, որ անուանեցաւ Թահմազ Ղուլի խան[53], արի և քաջ պատերազմօղ, եկ Մաշադ քաղաքէն, բազում զօրօք, ի վերայ Ազվան Աշրաֆ սուլթանին[54], Գ (3) անգամ պատերազմեցաւ,
10 երեք անգամ ևս պատերազմեալն պարտեցաւ Աշրաֆ սուլթանն և փախեաւ։ Եւ ի ճանապարհին կալան զնայ զօրավարքն իւր Ազվանք տարան՝ ի Ղանդահար և անդ գլխատեաց զնայ երկրորդ որդին Միր-Վէիզին, որոյ անունն էր[55]։ Եւ Թահմազ Ղուլի խան բերեալ Մաշադայ շահ Թահ[մ]ազն, որդի շահ սուլթան Հուսէյնին և թախտ նստոյց ի Սպահան, ի նոյեմբեր ամսին։

Մարտ Պարսից ընդ Օսմանցիս[56]. Ի սոյն ամի եկ Թահմազ Ղուլի խանն զօրօք բազմօք և էառ Համադան, Քրմանշայ, Հաւիզայ, Շուշտար[57] և ի յայնկոյս երկրայս Պարսից ի ձեռաց Օսմանցոց։ 19ը

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնագրում 44-րդ բ էջից մինչև 47-րդ ա էջերի վերին լուսանցքներում գրված է այս վերնագիրը, որը նշեցինք ոչ թե ամբողջ ժամանակագրության, այլ միայն նրա սկզբի մասի համար, որտեղ խոսվում է Սեֆյան դինաստիայի թագավորների մասին։

2. Լենկ-թեմուրի արշավանքի ժամանակը սխալ է նշված, պետք է լինի 1386 թ.։

3. Այստեղ սխալ է, որովհետև Ջահանշահը կարա-կոյունլուներից էր, իսկ Ցաղուրը Ակ-կոյունլուներից։ Ցաղուրը Ուզուն Հասանի որդին էր, հետևապես շեխ Հայդարի կինը՝ Մարթան, ոչ թե Ջահանշահի թոռն էր, այլ Ուզուն Հասանի դուստրը։ Այս կապակցությամբ Ջ. Մ. Անջիոլելլոյի հաղորդածը ոչ միայն ստույգ է, այլև մանրամասն (տես Ուղեգրություններ, հա. I, էջ 279)։

4. Հայկական աղբյուրներից ուրիշներն էլ հաղորդում են, որ Ցաղուրին թունավորել են, սակայն ոչ թե նրա քույրը, այլ իրը թե, մայրը և եղբայրը (Մծ, 1, էջ 194 և այլն)։ Այդպես է ակնարկում նաև ժամանակակից մի գրիչ իր ընդարձակ հիշատակարանում, որը հետաքրքիր տեղեկություններ է պահել նաև Ցաղուրի մահից հետո տեղի ունեցած դահակալական կռիվների մասին (№ 4822, էջ 471ա և բ)։

5. Հայկական աղբյուրներից բացի, նման հաղորդումներ և ավելի մանրամասն, պահել են նաև Ջ. Մ. Անջիոլելլոն և մեկ ուրիշ ուղեգիր («Ուղեգրություններ», հտ. 1, էջ 271—273, 317)։

6. Սեֆյանների առաջացման այս պատմությունը նույնությամբ գտնում ենք Ա. Դավրիժեցու մոտ (էջ 584--585)։ Հնարավոր է, որ այս բնագրի հեղինակն օգտվել է Ա. Դավրիժեցուց։

7. Տես և հմմտ. Մծ, 1, էջ 126, 144, 195։

8. Իսմայիլ I-ի իշխանությունը Լենկ-Պուլը նշում է 1502—1524 թթ. (էջ 219)։

9. Հեղինակը հայկական թվականների հետ երբեմն գործածում է նաև դերը՝ «ՋՂ»-ի փոխարեն դրում է «ՋՂՕ» և այլն։

10. Խոսքը վերաբերում է Հնդկաստանի Մոնգոլական դինաստիայի երկրորդ ներկայացուցիչ Նասիր-ադ-դին Հումայուն, որը 1539 թ. նեղվելով իր թշնամիներից՝ սկզբում ապաստան է գտնում Սինդում (Արևմտյան Հնդկաստան) և ապա Պարսկաստանում։ Այնուհետև Թահմազ I-ից օժանդակ ուժեր ստանալով՝ վերահաստատվում է իր դահին։ Այստեղ դեպքերը նշված են 1541 թ., թեև մի այլ ժամանակագիր տալիս է 1545 թ. (Մծ, 1, էջ 144)։ Ստույգ վերջինս է։

11. Թահմազ I-ը մահանում է 1576 թ.։ Վ. Դ. Ալեսանդրին 1571 թ. լինելով Պարսկաստանում, Թահմազ շահի մասին գրում է. «Թագավորն իր վաթսունչորսերորդ տարուն է և հիսնմեկերորդն իր թագավորության» («Ուղեգրություններ», հա. 1, էջ 337)։

12. Հեղինակն ինքն է ամբողջ հատվածը վերցրել փակագծերում։ Պրոֆ. Աշ. Աբրահամյանն այս կապակցությամբ ենթադրում է, որ «փակագիծը դրված է հեղինակի կողմից, ըստ երևույթին, այդ հատվածը որպես անցենդուր հատված դուրս հանելու նպատակով» («Դիտական նյութերի ժողովածու» № 1, էջ 95, ծանոթ. 3)։ Մինչդեռ այդ հատվածում դրված «ասեն թէ» բառերը մեզ ենթադրել է տալիս, որ այդ հատվածն ուրիշների կարծիքն է և հեղինակն ինքն էլ դրանց կասկածանքով վերաբերվելով դրել է փակագծերում։

13. Հմմտ. «Ուղեգրություններ», հտ. 1, էջ 335։

14. Նկատի ունի Լայա փաշայի և հաջորդ տարիների արշավանքները, տես վերևում էջ 241—242։

15. Իրականում 1587 թ.։

16. Այսինքն օգոստոսի 11-ին, անշարժ տոմարի դեպքում։

17. Հմմտ. Ա. Գավրիժեցի, էջ 37—70, 79—92, Մծ, 1, էջ 181—187։

18. Իմա Հերաթ, Ավղանստանում։

19. Հուրմուզը փոքրիկ կղզի է Պարսից ծոցում, որի անունով էլ կոչվում է Պարսից ծոցն Արաբական ծովին միացնող նեղուցը։ Սակայն, կարծում ենք, խոսքն այդ մասին չէ, այլ Հուրմուզ նավահանգստի, որը գտնվում է Բենդեր-Աբասից մի փոքր արևելք (В. Бартольд. Историко-географический обзор Ирана, СПБ, 1903, էջ 98)։

20. Վկայության թվականը վերաբերում է Բաղդատի գրավմանը, սակայն Երևանի գրավումը շահ Սեֆիի կողմից տեղի է ունեցել ավելի շուտ 1636 թ. (Մծ, 1, էջ 196 և այլն)։

21. Մի ժամանակագիր նշում է, թե Արաս II-ը 14 տարեկան հասակում եղավ թագավոր (Մծ, 1, էջ 395)։

22. Խոսքը վերաբերում է Հնդկաստանի Մոնղոլական դինաստիայի ներկայացուցիչներից մեկին՝ Շիհաբ-ադ-դին Շահ-Ջեհանին։

23. Հեղինակը նկատի ունի Շիհաբ-ադ-դին Շահ-Ջեհանի որդի Մուհի-ադ-դին Աուրենզզիբ Ալեմգիրին։

24. Սակայն ուրիշներն այդ տեղեկությունը չեն հաստատում։ 1689 թ. Նորագավթում ընդօրինակած մի հայմավուրքի հիշատակարանում (№ 1512) գրիչը գրում է. «... Նաև ի թագաւորութեանն Պարսից շահ Սուլէմանին, որդւոյ փոքր շահ Ապասին և իշխանութեան Արարատեան Նահանգի Զալ խանի, և դայսու. ժամանակաւ շարժեալ են զօրքն Պարսից խառնիճաղանճ բազմութեամբ և եկեալ նստեալ կան յերկիրն Ադուանից և կամին գնալ ի վերայ ազգին Վրաց. իսկ ազգն Վրաց միաբանեալ են ընդ հիւսիսային թագաւորին Մոսկովու և նոքա ևս զօրս գումարեալ, նստեալ կան ի ստորոտ լերանցն Նալպուզ կոչեցեալ, որոնց են գլխաւորք որդիք իշխանին Վրաց Շահնազար խան և Գօրգի խան կոչեցեալք, ազատամարտեալք ի թագաւորէն Պարսից և անդէն զետեղեալք կան, այլ զկատարածն Այստծոյ է գիտելի, թէ զինչ լինիցի»։ (էջ 557բ)։ (Տես նաև «Արարատ», 1888, էջ 526—531)։

25. Բնագրում այդ հատվածի դիմաց, ձախ լուսանցքում մեկ ուրիշն ավելացրել է «որ և թագաւորեալ ամս ԻԸ, ամիսս Գ, աւուրս Ն»։

26. Այս դեպքերի մասին մանրամասն տես ներքևում, ծանոթ. 35։

27. Բնագրում «Թվին հայոց ՌԿԸ ապրիլ ամսոյ» հատվածը հեղինակը գրել է ձախ լուսանցքում։

28. Բնագրում «այլ ազգ Ադուանքն» հատվածը հեղինակը ավելացրել է ձախ լուսանցքում։

29. «Թվին ՌՃԿՕ... եկն յԱսպահանն» հատվածը բնագրում հեղինակն ավելացրել է ձախ լուսանցքում։

30. «Ի սոյն թվիս ՌՃԿՕ յորժամ՝ շահն էր Թէհրան... և զամենայն ինչս նորա և զտունն գրաւեաց» հատվածը հեղինակը գրել է բնագրի ձախ լուսանցքում։

31. «Ի Զօրն շաբաթ... շաբաթ աւրն» հատվածը հեղինակը գրել է բնագրի աջ լուսանցքում։

32. Այս վերնագիրը բնագրում գրված է 47բ էջի վերևի լուսանցքում, բայց որովհետև ավղանների արշավանքի պատմությունն սկսվում է այստեղից, նպատակահարմար գտանք վերնագիրը գնել այստեղ։ Այդպես է վարվել նաև պրոֆ. Աշոտ Աբրահամյանն իր հրատարակության բնագրում։

33. Բնագրում մի բառի տեղ թեև չի գրված, բայց իմաստը լրիվ է։

34. Բնագրում «Իսկ յորժամ պաշարեալ էր քաղաքն... եհաս ի Թաւրէզ» հատվածը հեղինակն ավելացրել է ձախ լուսանցքում։

35. 1723 թ. մի հիշատակարանում բավական մանրամասն տեղեկություններ ենք գտնում ավղանների այս արշավանքի, ինչպես նաև նախորդ դեպքերի մասին, բերում ենք հիշատակարանի այդ մասը. «Իսկ ի յերկրորդի վերստին փոխարկութեան գաղափարելոյ մատենիս, զոր սակս յաւելումն զանազան բանից պիտոյից օգտակարաց սրբոց վարդապետաց ասացելոց եղև, ժողովեալ և ի ներս ածեալ յոքնաշխատ երկօք ի նոյն Մովսիսէ յաջորդէ կորովարան սրբազան վարդապետէ, որ եղև ի զբաւ գրչութեանս ի թուականիս Հայոց ՌՃԿԳ (1723) ամին և ի յամսեանն հոկտեմբերի ԺԳ (14) ի գառն և ի

ղժնեայ վշտալիր ժամանակիս, յորում եկին զօրքն Աղուանից յերկիրս Ասպահան և կա-
յան զաթոռն թագաւորութեան Պարսից և թէ որպէս սակաւ մի համառօտ ասացից կարճ
ի կարճոյ։ Բանդի իշխանն Ղանդահարու, որոյ անունն կոչիւր Հաճի Ամիրխան կրկին
կոչիւր մականուամբ Փիրբուէիս, որ էր ազգաւ Աղուան և էր ընդ հնազանդութեամբ թա-
գաւորին Պարսից շահ սուլթան Հուսէն արքային, սա ԺԵ (15) ամաւ յառաջ քան զայս,
ապստամբ եղեալ ի թագաւորէն և միշտ պատերազմէր ընդ քաղաքս և ընդ գեօղս, զորս
մերձ առ իւրոյ քաղաքին էր, որպէս թէ տիրեսցէ նոցա, զկնի վաղճանի սորա կալաւ
զտեղի եղբայրն իւր սուղ ինչ ժամանակ, իսկ որդի Հաճի Ամիրխանին, որ էր ամաց
իբրև ԻԸ (28)-ից, որոյ անունն կոչիւր Մահմուդ, սա եսպան զհօրեղբայրն իւր և իսկոյն
էառ զիշխանութիւն հօրն իւրոյ. և տիրեաց երկրին Ղանդահարու, յետ սրոյ սակաւ զո-
բաժողով լինել. եկեալ ի Ղանդահարու և եկն ի վերայ քաղաքին Քըրմանու և պատերազ-
մեցաւ ընդ նմա և էառ զքաղաքն ընդ նմին էառ և զքաղաքն Եզդ։ Իսկ ի յաւուրսն յայն-
միկ էր թագաւորն շահ սուլթան Հուսէն ի քաղաքն Ղազբին, զոր վասն պատերազմի
աղագաւ էր դնացեալ և զի կամէր գնալ ի քաղաքն Հրաթ և առնուլ զնա. և յորժամ ոչ
դնաց թագաւորն ի Հրաթ, այլ դարձաւ յետս ի քաղաքն Ասպահան, զայս լուեալ Մահմուդ
խանին, որ մինչդեռ ի սահմանս քաղաքին իւրոյ շրջէր այսր և անդր և պատերազմէր
ընդ բնակիչս տեղւոյն, սակաւ այսպէս առնելով զքաղաքս և զգեօղս մինչև եկն եհաս ի
վերայ թագաւորանիստ քաղաքիս Ասպահանու ի գեօղ մի, կիսոյ աւուր ճանապարհ արտա-
քոյ քաղաքին, որ ասի Վարդանայ, որ է յարևելս քաղաքին։ Իսկ թագաւորն շահ սուլ-
թան Հուսէն կոչեաց զեպարքոսն իւր և է վէզիր աղամն և ժողովեաց զամենայն իշխանսն
և զմեծամեծս հանդերձ զօրօք բազմօք, որ էր թիւ զօրացն ԿՌ (60000) և մեծաւ պատե-
րազմական պատրաստութեամբ առաքեաց ընդդէմ նորա և պատերազմեցան ընդ միմեանս
յաւուրն յայնմիկ, որ էր ի քառասնորդաց պահոց ի տնտեսի կիւրակէն, ըստ որում
պարտեան ազգքն Պարսից փախեան և մտին ի քաղաքն և ամրացան ի մէջ քաղաքին
մեծամեծ պատնիշօք և ամրոցօք և զօրացան Աղուանից ակն ունելով, թէ միւս անդամ
դառնան ի պատերազմ զօրքն Պարսից և ոչ ելին ի քաղաքէն, այլ մեծաւ երկիւղիւ ամ-
բանային, զկնի պատերազմին, յետ զաւուրս ինն առաքեաց Մահմուդ խանն սուլտանս
երեք զօրօք բազմօք, որք եկեալք ի գիշերի յեգակարծուոջ ժամու և հասին ի շէն մի քա-
բահատաց, որ կոչի Քօչէր, որ է եզր Ջուղայու, քակեցին զամուրս նորա և մտին ի նա.
և իսկոյն այրեցին զտունս նոցա և անտի իջանելով մտին ի Ջուղայ և ի Ջուղայու ելին
ի վերայ գետւոյն, որ կոչի Զանդարիուն և պատերազմեցան ընդ Պարսիցն, յաւուրն յայն-
միկ, որ էր պատկեր աւուրն երեքշաբթի. իսկ ի հինգշաբթին ի հասարակել աւուրն եկն
Մամուդ խանն մեծաւ զօրօք և եմուտ ի Ֆարհապատ, որ է արտաքոյ հարաւոյ քաղաքին
և բանակեցաւ ի տեղւոջն յայնմիկ և իսկոյն վաղվաղակի առաքեաց զզօրս բաղումս ընդ
բոլորս քաղաքին և շրջապատեալ պաշարեաց զքաղաքն ամենայն ընդ շուրջանակաւն իւ-
րով և պատերազմեցաւ զամիսս վեց և կիսոց, ըստ որում յոյժ զօրացաւ սովն և մահն ի
մէջ քաղաքին, զորոց ազգացն Պարսից յոլովք մեռանէին ի սովոյն։ Եւ զի թէպէտ բազ-
մեցս անգամ նախարարք թագաւորին խօսեցան առանձնակի առ զիշխանս Մահմուդ խա-
նին, որպէս թէ համոզեսցեն զնա ընդ թագաւորին և թագաւորին տացէ նմա բազում
պարգևս և քաղաքս. եթէ դարձցի յետս, որում ոչ հաւանեալ Մահմուդ խանին, այլ արիա-
կան քաջութեամբ պատերազմէր և սաստկաբար հատանէր զկերակուրս քաղաքին. իսկ թա-
գաւորն յաղթահարեալ ի սովոյն և երկուցեալ ի մահուանէն եւ ի քաղաքէն զիւրովի հան-
դերձ եպարքոսին և զիշխանօք գնաց ի Ֆարհապատ ի հնազանդութիւն Մահմուդ խանին
և եդ զթագ ի գլուխս նորա և անուանեաց շահ Մահմուդ, որ էր աւուր պատկերին ուր-
բաթ, էանց զշաբաթն և ի կիւրակէն, որ էր թուականիս հայոց ՌՃՀԲ (1722, շարժական
տոմարի համաձայն հայոց ՌՃՀԲ թվի ամանորը սկսվում է 1722 թվի սեպտեմբերի 22-ին
Վ. Հ.) յամսեանն հոկտեմբերի ԺԴ (14), որ ի քառակերպեան հարցի կիւրակէն, թագա-
ւորն շահ սուլթան Հուսէն առեալ զշահ Մահմուդն տարաւ ի քաղաքն և նստոյց ի դահ
աթոռոյն իւրոյ և զամենայն ինչս իւր ետ ի ձեռս նորա և յանձնեաց նմա զքաղաքն. իսկ
ի զրաւ մատենիս երկու ամէ, որ վարէ զիշխանութիւն թագաւորութեան իւրոյ և թագա-
ւորն շահ սուլթան Հուսէն ունի ի պահեստի առանց նեղութեան և վշտի...», (№ 2271,
էջ 244բ—246ա)։

Այս տվյալները միանգամայն ստույգ են և հաստատում են Մարտիրոս դի Առա-
քելի վկայությունները։ Հմմտ. Հ. Ջալալյանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի,
Յերուսաղէմ, 1868, էջ 19—40։

36. Այս վերնագիրը գրված է բնագրի 48ա էջի վերևի լուսանցքում, բայց որովհետև Օսմանյան Թուրքերի արշավանքի պատմությունն սկսվում է այստեղից, ուստի նպատակահարմար գտանք վերնագիրը գնել այստեղ։ Նույն բանը անս պրոֆ. Աշ. Աբրահամյանի մոտ։

37. Վերևում նշված ձեռագրի (№ 2271) հիշատակարանի շարունակությունն այդ մասին հետևյալն է հաղորդում. «Ի սոյն ամի եկին զօրքն բազումք Օսմանցւոց ի Բաղդաս քաղաքէ և հասին յեկբատանս հայոց Ամատունեաց և պատերազմեցան ընդ Ամատունիս և առին զքաղաքն զԱմասուն...» (էջ 246ա)։

Միր-Վեյիսի 1721 թ. արշավանքին (ծանոթ. 35) և սրան հաջորդող Օսմանյան Թուրքերի ասպատակություններին է նվիրված Մատենադարանի № 1534 ձեռագրի հիշատակարանի հետևյալ հատվածը. «...ի թվականիս հայոց ՌՃ և Հ (1721) ամին եղև յարուցմունք ի վերայ Պարսից երկրին իսմայէլացիք, որ կոչի Օսմանցիք... Այս բանն կատարեցաւ ի վերայ յերկրին Պարսից...ոմն Միր-Վէիս Գող անուն եկեալ կործանեաց զթագաւորութիւն Պարսից, որ հաստատէր զթագաւորութիւն նորա ի կրակապաշտ ժամանակէն. և Օսմանցոցն չարացեալ վասն բանիցն անիծեալ Միր-Վէիսին, թէ մի գող շուն եկեալ առցէ զթագաւորութիւն Պարսից արքայի. և նորա նախանձուն շարժեցան Օսմանցիքն և եկեալ յարեցան ի վերայ յերկրին Պարսից, առին բազում քաղաքս և գիւղս և յաղարակս և քանդեալ կործանեցին ամուր ապարանք և գերի վարեցաւ ազգս հայոց մեծէ և մինչև ի փոքունս և եկեղեցիք և վանորայք, յանապատք մտեալ, բազում սրբութիւնս՝ գիրք և պատուական խաչեր և աւետարանք և այլ ամենայն բսպասք զարդուց սուրբ եկեղեցեաց և վտնորէից աւար և գերի տարեալ և շատ վարդապետք և կարգաւոր քահանայք, սարկաւագունք և աշխարհականք, որպէս ոչխարի գենեցին և ի սպանդ վարեցին...» (էջ 612ա և բ)։

38. Բաքվի, ինչպես Ջացած վայրերի գրավումը ռուսների կողմից լինում է 1733 թ.։ Վերոբերյալ ձեռագրի (№ 2271) հիշատակարանում այդ դեպքերը ևս արձանագրված են. «Գարձեալ եկին զօրք բազումք Ուռուսք և կալան զՇըրվան, Շամախի և Ղբըզտունիսն (իմա Ռեշտ։—Վ. Հ.) ամենայն։ Ըստ այսմ պատճառէ յամենայն սահմանս Ասպահանու քաղաքիս մեծ պատերազմ է յարուցեալ ի վերայ միմեանց, որք միշտ ընդ միմեանս մարտնչին»։ (էջ 246ա)։

39. Քաղաք Պարսկաստանում Ռեշտից մի փոքր հարավ-արևելք։

40. Քասգաբ, քաղաք և մարզ, ընկած է Ռեշտից հյուսիս-արևմուտք, Աստարայից և Ղզլտաղջից հարավ։

41. Այս տեղանունը պրոֆ. Աշ. Աբրահամյանը սխալ բառանջատում կատարելու հետևանքով իր հրատարակության բնագրում նշում է «Ինիուզովուշ» ձևով, մինչդեռ ձեռագրում պարզ երևում է «Ի Նիազովուշ»։ Խոսքը վերաբերում է Նիգովայա (կոչվել է նաև Միխայլովկա) փոքրիկ նավահանգստին, որը գտնվում է Խաչմազ կայարանից մի փոքր հյուսիս-արևելք, Կասպից ծովի ափին, Կուբյալ-չայի գետաբերանում, Բաքվի և Դերբենդի միջև։ Ազրբեջանցիներն այն կոչում են Նիազտրագ։

42. Բնագրում «Յոջ» ձևով։

43. Հեղինակը հավանաբար նկատի ունի Հուվեյդա քաղաքը, Սուզից հարավ և Շուստերից հարավ-արևմուտք, այժմ ավերակ (В. Бартольд, Историко-географический обзор Ирана, էջ 124)։

44. Կարծում ենք խոսքը վերաբերում է Զենջան քաղաքին, Սուլթանիայից հյուսիս արևմուտք։

45. Ղազվինից արևմուտք։

46. Այս վերնագիրը բնագրում գրված է 48բ էջի վերևի լուսանցքում, և որովհետև այդ դեպքերն սկսվում են այստեղից, ուստի այն բերեցինք հատվածի սկզբում։

47. Թոխաթի Մահմատեհիպ Բաղում 12-ամյա գրիչ Հակոբը 1724 թ. օգոստոսին գրած իր հիշատակարանում այդ մասին գրում է.

«Արդ՝ գրեալ եղև սայ ի քաղաքն Թոխաթ... ի Թագն Մահմատէհիպ... գիրքս գրեցի ի խնգրոյ հօրըն իմոյ, որ կոչի Գալուստի որդի, Աւետիս գպիր, ի տղայ հասակութեանն ԲԺ (12) ամեայ ի թվին ՌՃՀԳ (1724)-ին յամսեանն օգոստոսի, գառըն և գժրնգակ ժամանակի, որ գնացին Օսմանցիքն ի վերայ Էճէմիստանու պատերա[զ]մն և առին Թիֆլիզ և Խոյ և Երևանու երկիրն և առին ի նոցանէ բազում գերիս հայ և Ցաճիք անթիւ և անհամար, որ ոչ գրով կարեմք գրել և ոչ լեզուով ճառել, բայց ևս ի վերայ նորայ պատե-

բազմի են զապազայն ոչ գիտեմ, թէ գինչ կու լինի...» (№ 843, էջ 38ա և բ. հմմտ. նաև նույն ձեռագրի 60ա և բ էջերը)։

48. Գրոֆ. Աշ. Աբրահամյանը ժամանակագրության իր հրատարակության բնագրում այս անունը երկիցս նշել է «Նօրս» ձևով։ Սակայն Նորս անունով մի գյուղ կա միայն Նախիջևանի հյուս. արև. մասում։ Բնագրում պարզ գրված է Զօրս (հմմտ. Ա. Դավրիժեցի, էջ 237), որը բերդ էր և կենտրոն համանուն խանության (տես վերևում, էջ 424, ծանոթ. 42)։

49. Այս կոիվների մասին որոշ մանրամասնություններ հաղորդում է Անանուն վանեցին (ՄԺ, 1, էջ 370—371)։

50. Այս վերնագիրը գտնվում է բնագրի 49ա էջի վերև լուսանցքում, այն տեղափոխեցինք դեպքերի պատմության սկզբում։

51. «Սեպտեմբեր ամսին [և] հայոց ՌՃՀԾ» հատվածը հեղինակն ավելացրել է բնագրի ձախ լուսանցքում։

52. Այս ժամանակ է, որ Օսմանցիք մտան Սյունիք։ Մի հիշատակարանում գրված է.

«ՌՃՀԶ (1727) թվին, ի սոյն ամի, որ ազկն Օսմանցոց առան երկիրս Սիւնեաց ազկս հաեոց նեղեղէին ի ձեռս նոցա, նտեսս հալիծորու անապատն կուսից առան, ՆՃ (500) կուսանք գերի տարան և Թող աշխարիկան ու մանկանց, նաևս ՋՃ (000) երիտասարդ հասակաւ տղայք սրով հալածեցին...» (№ 4156, էջ 262ա և բ)։

53. Իմա Նադիր շահ, որը գահ բարձրացավ 1736 թ.։

54. Ավդան, իշխել է 1725—1730 թթ. (Լեն-Գուլ, էջ 219)։

55. Բնագրում անունը բաց է թողնված։

56. Այս վերնագիրը բնագրում գրված էր 49բ էջի վերևի լուսանցքում, հրատարակության բնագրում, գրեցինք համապատասխան նյութի սկզբում։

57. Շուշտար կամ Շուստեր, քաղաք Խուժիստանում, գտնվում է Քերուն գետի ափին։ Հնում պարսիկ թագավորների ձմեռանոցը։